էր, նովիմբ չափով ի նոցանէ մխիթարեալ, իբրև ընտանեաց զսէր ցուցանելով: . . . . Եւ ամենայն ծախք նորոգման հազար և վեց հարիւր և երեսունըվեց ղուռշ էր լեալ՝ ի ցուցանել ոէֆթէրին, անպակաս լրացեալ հասոյց ի տանուտէարսն ցուցանելով զհարազատութիւն հօրն այնմ որդին և գիր պա- յազատ վայելչութեան, զի պարտապան համա- րելով զինքն՝ շնորհեաց զայն յօժարութեամբ, հաստուցանելով զվարձ ծնօղին: Իբրև դարձան տանուտէարք ի Ֆիլիպէ մեծաւ շնորհակալու- թեամբ միանգամայն գձայն բարձեալ զոհաբա- նական օրհնութեամբ օրհնաբանեցին զամենա- կալն Աստուած յափտենից ի վերայ ամենայն պարգևաց մխիթարութեանց մանաւանդ ի վերայ սոյն շնորհաց, որ փոխանակ հօրն՝ ընծայեաց զորդին ի ժառանգութիւն և կանգեաց արձան յիշատակի և այցելու ժողովրդեան, զոր օրինակ Մովսեսի զՅեսու և փոխանակ Եղիայի զԵղիսէոս, ասելով՝ թէ ոչ էր թողեալ զաւակ Տէառն, իբրև զՍոդոմ լինէաք և Գոմորայ նմանէաք, ըստ Ե- սայեայ. և թէ այսօր է ազանել մեզ ի ճանա- պարհիս, մխիթարեսցուք ընդ դստեր Սիօնի հանգեաւ յուսով և զոչէ ուրախութեամբ. բուծ- ցին նովաւ և ակար մարդիկ ի խաղաղութեան բնակեսցեն: Մատչին պատարագք Տեառն զօ- րութեանց ի նեղեալ և ի խոնարհ ժողովրդենէ. ցնծասցեն աղքատք յաղագս Տեառն ուրախու- թեամբ և անյոյսքն ի մարդկանէ լցցին խնդու- թեամբ: Որք և այլովք այսպիսեօք բերկրու- թեամբ միանգամայն քահանայք և տանուտէարք շնորհակալութեամբ գրեցին զկատար պսակին հօրն պատճառաւորեալ ի սկիզբն, և աւարտումն ի նմանէ լրացեալ վայելչապէս առ Մաթէոս Չե- լեպին:

Ահա գրեթէ ամբողջութիւնը այս գրութեան, որու Բ. մասն ալ կը յուսամ շուտով հրատա- րակել:

Վերջացնելէ առաջ կ'ուզեմ աւելցնել որ այս տարի երբ Վամենայ ձամբորդութեան մը առթիւ Երուսաղէմ եղայ՝ վայելելով Սիրելի Մե- սրոպ Եպ. Նշանեանի և Սաղեմի միաբանու- թեան բանկագին ասպնջականութիւնը, Մեսրոպ Եպս. առ ի մեծ զարմացումն ինծի ցոյց տուաւ պատմական գրութեան մը՝ Երեմիայէն առ Եղիա- զար Պատրիարք գրուած Ալպրո Չելեպւոյ մա- հէն վերջ, ուր Երեմիա անսալի և անյուր ա- նարգանքներով կը պախարակէր Ալպրո Չելե- պին: Ներեկս դուրս է ասիկա հաշանօրէն, և ա- կայն իրր նորութիւն մը և նաև նիւթիս հետ անուղղակի կապ ունեցող իր մը կը յայտնեմ հոս:

Հետաքրքրական պիտի ըլլար Ալպրոյի մա- սին Երուսաղէմ գտնուող բազմաթիւ բանկա- գին յիշատակարանները գնել մաս մաս լոյս տեսած անկնել:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԶՈՍԻՄՈՍԻ ԶՐՈՅՑԻՆ[1]

Մեծին Աղեքսանդրի նշանաւոր ճամ- բորդութիւնն ի Հնդկաստան—երկիր մը՝ հնուց ի վեր միշտ խորհրդաւորապէս շրջապա- տուած և հելլենական շրջանին առարկայ եղած իմաստասէրներու առասպելական պանդխտութեանց (Լիկուրգոս, Պիւթագո- րաս, Դեմոկրիտոս և ա դարուն յ. Ք. նոր-պիւթագորեան Տիանացի Ապողոնիո- սի կողմանէ) — շատ ժամանակ վերջը կը նոյնանայ այդ թագաւորին ձիակորճերու (hippogriffe) կառքով ճամբորդութեան հետ՝ դէպ ի գրախտն երկրաւոր:

Այս տեսարանը դիւրաւ կրնանք հիա- ցումով նշմարել բիւզանդական խորաքան- դակի մը մէջ՝ Վենետկոյ Ս. Մարկոս մայր եկեղեցւոյ հիւսիսակողման պատին վրայ, ուր այնքան արևելեան սուրբեր կը շող- շողին ոսկեզարդ, բաղեզանման պատա- տելով այդ որմերը, և կը պատկերացնեն մթնշաղ դարուց հնաւանդ վէպերը…:

Ամէն ոք կը տեսնէ թէ Աղեքսանդրի յետամնաց զրոյցը նոյն շրջանակին մէջ կը մտնէ՝ որուն կը վերաբերի Զոսիմո- սինն ալ. անոր մէջ իրր ի հալոցի կը թա- փուին և կը ձուլուին զգուշաւոր միայնա- կեցի մը աւանդութիւնն, և պատմութիւնը ինն և կէս ցեղերու (Եզր և Կոմոզիա- նոս) և կամ Ռեքաբեանցը (Երեմիա Գլ.

1. Վկայաբանութիւն սրբոյն Յովսիմոսի. են… Հրատարակեց… Հ. Բ. Վ. Սարգիսեան… Վենետիկ. Ս. Ղազար 1919.